

ձմեռուայ մսով բանջարեղէններուն մէջ: Ամէն ինչ ունէր իր տեղը ու ամէն ինչ ծրագրուած էր համաձայն ապրուստի կարելիութեանց ու տեղական պայմաններուն:

ԾԱՆՕԹ.— Պարտէզի մասին գրուած կայ ևս Տեղագրական Բաժնին մէջ, « Եղանակային Աշխատանք »-ի մէջ:

Ա Յ Գ Ի Ն Ե Ր

Ժողովրդական ապրուստի ու տնտեսութեան մէջ մեծ էր դերը այգիներուն եւ պարտէզներուն: Գրեթէ ամէն ընտանիք ունէր մէկ կամ աւելի այգիներ, որոնց արտադրութիւնը կ'օգտագործուէր տարեկան պաշարի ամբարման աշխատանքի ընթացքին:

Ֆէնէսէի ամէնամօտիկ այգիներն էին ձորի = Ծորի էգիները, այդպէս կոչուած իրենց ձորանման դիրքին պատճառով:

Դարերու ընթացքին դարնանային հեղեղներ եկեր ու անցեր են այդ ճամբով, տանելով ու բերելով հողը: Հսկայական խորխորատ մըն էր այդ զեղատեսիլ ձորը. հեղեղատ ճիշդ մէջտեղը, այգիներ երկու կողմերուն ու ապառաժուտ բարձունքներ աւելի վերերը:

Արեւելքին՝ Վերի Կալը իսկ դիմացը Կէօլէմէնի քարձր էգիները: Վերէն վար էին ձորի այգիները, մօտիկ, յարդի ու պտղաւատ:

Բուն մէջտեղի արգաւանդ հողամասը կը կոչուէր Էօզ իսկ երկու կողմի բողբոսաբար բարձրագիւր այգիները՝ Պայիր:

Էօզին ճիշդ մէջտեղէն կ'անցնէր Սելը (հեղեղ) որ ամէն տարի, դարնան իր հետ կը բերէր աւազ, հող ու կենսունակութիւն: Այդ ջուրն էր որ շատ անգամ իր բերածէն շատ աւելին կը տանէր իր հետ, քանդելով Տէրէին պատերը:

Տարիներու փորձառութեամբ տեղացիք վերէն կապելով կ'օգտագործէին այդ ջուրը ոչ միայն Ձորի՝ այլ Քէօր Գուլուի, Պիւլպիւ Տէրէսիի ու Կէօլ Էմէնի այգիները տարին մէկ անգամ ջրելու համար:

Գրաւոր ու անգիր օրէնքներ գոյութիւն ունէին առանց կռուի ու ժամանակին ընելու այդ ջրումը: Ամրան ամիսներուն բոլորովին կը ցամքէր Կէօսթէրէի լեռներէն վար խուժող այս կենսատու հեղեղը:

Ձորի հիւսիս-արեւմտեան կողմը, դարաւանդներու վրայ տնկուած էին Կէօլէմէնի այգիները: Աւելի հիւսիս կը տարածուէին Պիւլպիւլ Տէրէսիի, Քէօր Գուլուի ու Քէլէքէգի իսկ Կէօլէմէնէն վար Չոմախլուի ճամբուն վրայ էին Չայիչիի այգիները:

Թաղամասի արեւելքին, Սուրբ Գրիգորի կողմը կային նոյնանուն այգիները, Չայիրի, Զէլէրի ու Դիւնացի այգիներն ու Տէվէլտաղը: